

Սուրեն Դ. Դանիելյան
Բանասիր. գիյր. դոկտոր

ԴԷՊԻ «ԱՄԲՈՂՋԱԿԱՆ» ՕՇԱԿԱՆ

Մատենագիտությունը որպէս ուղիղ ճանապարհ*

Բանալի բառեր – մատենագիտություն, Յակոբ Օշական, Վահէ Օշական, Մարկ Նշանեան, Արտաշէս Տէր-Խաչատուրեան, մատենագիտական տուեալ, քննադատություն, մամուլ, պատմուածք, հէքեայթ, վիպագրություն, երոպական մտածողութեան հուն:

Մատենագիտությունը, որպէս գիտաքննական վստահելի ուղղություն, Յակոբ Օշական–գրողի ստեղծագործական շերտերը բացայայտելու, մանրամասների մէջ ձշմարտությունները դաստասելու ամէնից գործնական ճանապարհն է: Յայտնի է, որ Յ. Օշականը գրական և գիտական մտքի ազգային միջանցքներում առաջնորդողի դերակատարություն ունի, սակայն նրա հարուստ ժառանգութեան զգալի մասին, ճանաչողական արժէքներին գիտական հանրությունը, որքան էլ անբնական կարող է թուալ, մնում է սակաւածանօթ:

Մատենագէտի աշխատանքը շոշափում է մի շարք յարակից ասպարէզներ, հակառակ երբեմն հանդիպող այն մակերեսային տպաւորութեան, թէ բանասիրական միապաղաղ, անգամ ձանձրոյթի սահմաններին հասնող ոլորտ է՝ զուրկ գիտագործնական խթաններից: Մինչդէռ Յ. Օշականի մատենագիտական կազմությունների փորձը ցոյց է տալիս գիտական հետաքրքրությունների բազմապիսի մանրամասներ, որոնք ամբողջացնում են գրողի դիմանկարի լաբորատորիան տարբեր դիտանկյուններից՝ առօրեայից մինչև գրասեղան, հայեացքի ուղղությունից մինչև բնաւորություն և վարքագիծ, բացում բնագրերի, ձեռագրերի ընթերցման կապակցումները, գրոցների ներքին տնտեսությունը:

Մատենագիտական տուեալների համադրումները մեկնում են Յ. Օշականի՝ գրականությունն իբրև անհատի հոգեբանություն և իմացական կանգունների համակարգ կռահման սահմանները: Յ. Օշականը համաշխարհային արձակի տիրոյթներում նկատել է համընդհանուր ու խորածաւալ գնացք

*Յօղուածն ընդունուել է տպագրութեան 10.04.2019:

դէպի ներաշխարհի բացայայտման, մարդու վարքագծի դրսևորումների անվերջանալի ծալքերը և դրանց համաքայլ է ընթացել: Ակնյայտ է ճանաչողութեան վեկտորի մեծութիւնը. ժամանակը գրողին տանում է դէպի հոգեբանական քննութեան առաւելութիւնների յստակեցում: Նորագնայ փոփոխութիւններում մենք որսում ենք հեղինակի հայեացքի տեղաշարժ՝ հնարաւորութիւն ստանալով հիմնաւորել նրա անցումը դէպի արևմտեան մտածումի տարածք, արձանագրել ներաշխարհի բնափոխութեան ու հոգեբանական սուր փնտռութիւն յամառութիւն Արևելքի գրական սիւժէների խաղարկումներում՝ յատկապէս ընդգծելով միջավայրը և հէքեթի ժանրին խոր հակուածութիւնը, բիրտ իրականութեան առջև հոգիների ներանձնական բախումի անմիջական հետևանք խոնարհումի դիմաց փխրուն հէքեթի փլուզումը, ըստ էութեան՝ այն, ինչ կազմում է Յ. Օշականի ստեղծագործական հիմնատարը:

Դժուարին, ոլորապտոյտ ու երկար ճանապարհ է անցել օշականագիտութիւնը, որի ատաղձը և ամենատարբեր բաղադրիչները անվիճելիօրէն պայմանաւորել են նախ և առաջ մատենագիտական հաւաքագրական ուղղութիւնը: Գրողի կենդանութեան օրօք հրապարակած գրական նիւթերի համախմբման աշխատանքները, թում է, մօտենում են աւարտուն տեսքի, սակայն մահից յետոյ տպագրուած նիւթերի համահաւաքման, դասդասման վերջնական հանգրուանը դեռ հեռու է ամբողջականութիւնից: Խորանում է մեր և մեզ յաջորդող սերունդների՝ Յ. Օշականի հետ հաղորդուելու, նրա ժառանգութիւնը իրացնելու անհրաժեշտութիւնը, նրան հասկանալու, նրանով «հատուննալու», միշտ վեր ձգտումի ճանապարհը, ուրեմն՝ մատենագիտութեան նորանոր հրապարակումները կը լինեն ու կը մնան համալրումի աղբիւր, ասել է թէ՛ շարունակական:

Մօտեցել ենք Յ. Օշականի ժառանգութեան շուրջ նոր մատենագիտութիւն կազմելու ժամանակին՝ գրամշակութային անհրաժեշտութեան խորքով, ինչը պիտի ենթադրի գրողի և քննադատի՝ կենդանութեան օրօք և ետմահու լոյս տեսած հրապարակումների հնարաւոր ամբողջութիւնը¹:

Վերջին կազմածոն լոյս է տեսել քսան տարի առաջ²: Մեզանում ամէնից բեղուն գրիչ խաղացրած հեղինակի մատենագիտական նոր ուսումնասիրութեան օրակարգ բարձրանալու այս պահանջը մենք դիտում ենք, բնականաբար, Սփիւռքի գրականութեան խորաձանաչ, հմուտ տեսաբան Մարկ Նշանեանի պատրաստած լուսագոյն մատենագիտութեան փորձի վրայ:

1 Մատենագիտական աշխատանքը խորքի մէջ միշտ ունենում է երկու ենթաբաժին՝ գրողի ստեղծագործական ամբողջական ժառանգութեան երկու տրոհելի, տարանջատ ալգորիթմներ, որոնցից առաջինը կազմում են գրողի բուն գործունէութիւնը՝ վերհանած ամենատարբեր գրութիւնները՝ ստեղծագործական երկից, քննադատական, հրապարակագրական աշխատանքներից մինչև աօրէական, անգամ կենցաղային թուացող մանրութիւնները: Երկրորդ մասն անհամեմատ ծաւալուն է՝ գեղարուեստական և քննական խմբագրուած, ընդօրինակումների մէջ բարեփոխուած, նորովի հրատարակութիւններ, վերահրատարակութիւններ, մենագրութիւններ, գրողի կենքի ընթացքում և առաւել նրա անուան շուրջ ետմահու մեկնական անդրադարձումներ, դիմանկարից դէպի յուշագրութիւն մեկնական շերտերի հիստոր պատմութիւններ, դրուագային աշխատանքներից մինչև գրախօսութիւններ, շահագրգիռ գնահատումներ: Ի հարկէ, դրանք կազմում են մատենագէտի և գիտակ ընթերցողի համար մէկ, բայց նաև՝ անվերջանալի ամբողջութիւն: Երկրորդ մասը յատկապէս ընդգրկում է մինչև բուն հրատարակութեան պահը եղած հանրագիտարանային, ամբողջական տուեալներ, որոնք ապահովում են գրողի ներկայութիւնը և ազդեցութիւնը գրամշակութային շարժման համապատկերի վրայ:

2 Տե՛ս «Յակոբ Օշականի մատենագիտութիւն», կազմեց՝ Մարկ Նշանեան, Արտաշէս Տէր Խաչատուրեանի կողմէ պատրաստուած նախագիծի հիման վրայ, Լոս Անճելըս, 1999, 197 էջ:

Գիտամեթոդական ուրուագծով առաջիկայ իրաքանչիւր նոր կազմութիւն խնդիր ունի ի յայտ բերելու, շտկելու անցեալի հնարաւոր բացթողումները՝ պայմանաւորուած ժամանակով, ինչպէս և քաղաքական թոյլ կամ ուժեղ ենթախորքով, այն չափով, ինչքանով արդէն դարձել է գիտական շրջանառութեան մաս:

Նիւթի մէջ խրուելու պահից մատենագէտին միշտ ուղեկցում է այն ազնիւ կասկածը, թէ այն, ինչ գրողից կորսուած էր թուում տասնեակ տարիներով, «խնամքով» թաքնուած էր օրաթերթերի կամ հանդէսների խունացած սիւնակներում, յանկարծ անակնկալ վերաշրջելու է երևոյթի գնահատութիւնը, վերակազմելու է նոր դիմագիծ: Իսկ «կորսուածները», պարզում է, քիչ չեն, և նրանք գունային նոր սահմանների խաղերում նոր խորք ու շրջանակ են ապահովում ծանօթ դիմանկարին:

Բանասէր-մատենագէտների նոր սպասումների՝ բնագրային յայտնութիւնների դաշտը կանխորոշում են քննութեան ենթակալ հեղինակի ստեղծագործական ատաղձի խորքն ու շրջանակը, ինչը զգալիօրէն մօտեցնում է գրողի ակադեմիական հրատարակութեան վաղուայ օրը: Ընդ որում՝ անցեալի և ապագայի մատենագէտներն այսօրուայ բնագրային պաշարով չեն էլ կարող խորքի մէջ յաւակնել ներկայացնելու սպառիչ, ամբողջական աշխատանք: Բայց հարցին համակողմանի մօտեցումը օրակարգի խնդիր է: Կարելի է վերլիջել առ հասարակ տասնեակ տարիների ընթացքում Յ. Օշականի մատենագիտական նիւթերի կազմման և տպագրութեան պատմութեան՝ արտաքինից հարուստ, իրականում դեռ վտիտ, որոշ դէպքերում անգամ բաց մնացած էջերի ընթացքը:

Պէտք է ամրագրել, որ գրողի բնագրային փաստական շրջանառու նոր աղբիւրներն անցեալ դարի 80-90-ական թթ. էալէս նպաստել, նախապատրաստել են Մարկ Նշանեանի կազմած, հրատարակած «**Յակոբ Օշականի մատենագիտութիւն**» առաւել հանգամանալի, առաւել ամբողջականին աղերսուող յայտնի աշխատանքի մուտքը, հաւաքածու, որը, իրօք, հրապարակ իջնելու ինքնատիպ պատմութիւն ունի՝ անցած երկարամեայ ճանապարհին դրոշմուած անսովոր իր ձակատագրով:

Իսկ եթէ դիմում ենք համահաւաքման պատմութեան առաջին վեհերոտ քայլերին, անպայման մատնանշում ենք մատենագիտական առաջին հետաքրքրութիւնը պարզող փորձը «**Քաղիանք**» խորագրով³, ու դրան միայն

3 Յակոբ Օշականի մահից երկու տարի առաջ երուսաղէմում կազմակերպւում է «յոբելեանական յանձնաժողով», որը պիտի նախապատրաստէր գրողի մեծարման հանդիսութիւն: Այդ առթիւ 1946-ին նախաձեռնող խումբը գրողի գործուն աջակցութեամբ լոյս է բնծայում «**Քաղիանք**» խորագրով հատորը, որն ընդգրկում էր պատառիկներ նրա գեղարուեստական և քննադատական հարուստ ժառանգութիւնից: Բայց աւելի ուշագրան այն է, որ այստեղ տկար փորձ է արւում կազմելու մեր հեղինակի՝ տարբեր հանդէսների, օրաթերթերի աշխատակցութեան ժամանակագրական թուարկումը, բայց՝ առանց մանրամասների: Կան մամուլի յիշատակումներ, մատնանշուած են հրատարակութեան վայրը, տարին, բայց՝ այդքանը, բացակայում են ամացոյցը, օրը, պարբերականների յղումները: Խօսքը միայն խղճուկ և աճապարանօք կազմում Ժողովածուի ծնունդը չէր, այլ նաև գրողի յոբելեանը նշելու անձարակ քայլը, որոնց կենքի կոչելու փորձը օշականագէտ Պօղոս Մնայեանը տասնմէկ տարի անց պիտի համարէր «**տխուր հանգամանք**», որին այլևս «**պէտք չկայ անդրադառնալու**» (ՏԵՆ «**Միջնաբերդ**», գրական տարեգիրք, Ա. տարի, Պէյրութ, 1957, էջ 38):

Հպանցիկ անդրադարձով շեշտենք, որ այստեղ, «**Քաղիանք**»-ում, առանձին հատորով լոյս տեսած հրատարակութիւնների յիշատակումներն ունեն տարբերի և տպագրութեան վայրի նշում: Նոր ենթաբաժին են կազմում գեղարուեստական երկերի՝ պատմուածք, հէքեաթ, վէպ, տպագրութեան յղումները՝ պարբերականների ծաւալում ընդգրկումով, ուր միայն տարբերի է և վայրի նշումը: Թատերական երկերի զգալի մասի թուարկումը միայն անուանումների կարգ է: Ընդամենը սկզբնական 15 էջերի վրայ «**Քաղիանք**»-ի

27 տարի անց յաջողված «Մատենագիտական ծանօթություններ»ը, որը կազմել էր բանասեր Ժիրայր Դանիելեանը (Պէյրուիթ, 1973), հոր ձեռագրի ու տպածոյ իւրաքանչիւր տողի վրայ տիրաբար ձեռքերը փռած Վահէ Օշականի հետևողական ու տևական հնհնուքը, Պողոս Մնայեանի վերլուծական ու գնահատողական յաւելումով խորապէս մշակուած՝ «Յ. Օշական՝ թուականներով և թիւներով» (1984) աշխատասիրութիւնը և գրքերի խմբագրական հսկայական ջանքը, Արտաշէս Տէր Խաչատուրեանի, վերջինիս ընդհատած կէտից անմիջապէս շարունակութիւն բռնած Մարկ Նշանեանի՝ արդէն ծանրանիստ կազմածոները (1999): Այս ամէնն իրական ճանապարհ բացեց դէպի օշականեան գրահրատարակչական մանրամասները, նախապատրաստեց նոր հրատարակութիւններ, աղբիւրների նոր և նորովի ձգբրտման հնարաւորութիւններ:

Վ. Օշականը, փափաքելով ինստունական թուականներին՝ հոր մահից չորսուկէս տասնամեակ անց կազմել տալ նրա գեղարուեստական երկերի, աշխատութիւնների, ինչպէս նաև մամուլի մէջ ցրուած հրապարակումների մատենագիտական ամբողջական ժամանակագրական ցանկեր, դիմել էր պէյրուիթահայ փորձառու մատենագէտ Ա. Տէր Խաչատուրեանին⁴: Սակայն վերջինիս անակնկալ մահից քիչ անց, 1994-ին, ստիպուած էր կատարուածը, ձեռագիր վիճակում, թերի կամ կիսակատար⁵, այս անգամ վերայանձնել հնուտ տեսաբան-գրականագէտ Մարկ Նշանեանին: Ա. Տէր Խաչատուրեանը աշխատանքի աւարտին մօտ, յետադարձ ուժով, կցել էր յառաջաբան, ինչի մասին ոչ միայն ազդարարում է Մ. Նշանեանը, այլև ւաւելին՝ 1999-ին իր անունով հրատարակած օշականեան մատենագիտութեան սկզբում այն

խմբագիրները կենտրոնացրել էին «ապրումի, դատումի խառնուրդներ»՝ «Տպարարապաշտ էջեր» ընդհանուր խորագրի տակ (Օշական Յ. Յ., Քաղհանք, հրատարակութիւն յոբելիանական յանձնաժողովոյ, Երուսաղէմ, տպ. «Սրբոց Յակոբեանց», 1946, էջ ԺԴ): Նշենք, որ փոքրածաւալ, ընդամենը մի քանի էջանոց հատուածն աւելի շատ ուրուագիծ է և թողնում է յաջողուած «մատենագրութեան» տպաւորութիւն: Դա դեռ բաւական չէ, թատերական և քննադատական ենթաբաժիններում տեղ են գտել նաև զգալի թուով անտիպների՝ ոչինչ չստող թափփուած, «անկարգ» թուարկումներ, որոնք հապճեալութեան կնիք ունեն:

Որքան էլ տարօրինակ է, այս խիստ անկատար, բայց յանդուգն կոչումով «Մատենագրութիւնը» առանց որևէ փոփոխութեան, «Կենսագրական տեղեկութիւններ»ի կողքին անմիջապէս կրկնում է Բե-նիամին Նուրիկեանի նշանաւոր հանդէսը (տե՛ս «Նոր գիր», ամսաթերթ գրականութեան և արուեստի, Նիւ Եորք, 1946, Ը տարի, N 3-4, էջ 222-231):

4 Արտաշէս Տէր Խաչատուրեանը, յիրախ, բարձրակարգ մատենագէտ էր. աւելի վաղ բանիմացօրէն, լայնքով ու խորքով կազմել և Պէյրուիթում հրատարակել էր Լևոն Շանթի (1969), Շահան Պէրպլեանի (1969) և Ռուբէն Ջարդարեանի (1977) մատենագիտական գրքերը, իսկ գիտնականի մահից քսան տարի անց՝ 2014-ին, բանասեր Կարօ Յովհաննէսեանի անմիջական ջանքերով ու բժանիղի խմբագրութեամբ առանձին գրքերով լոյս էին տեսել նրա երկու աշխատասիրութիւնները՝ հայ գրքի և մամուլի մատենագիտական կողողային գործերը:

Այնպէս որ, արձանագրենք, հոր անսխալէպ հարուստ ժառանգութիւնն ամբողջական մի տանիքի տակ ի մի բերելու ճանապարհին Վ. Օշականի կատարած ընտրութիւնը ճիշդ էր և տեղին: Հրապարակաւ իշխում էր աներկբայելի վստահութիւն պէյրուիթահայ գրագէտի կարելիութիւնների նկատմամբ: Ա. Տէր Խաչատուրեանի կազմած մատենագիտութիւնն ըստ էության պիտի դառնար խորքային յենք Յակոբ Օշականի գեղարուեստական և քննադատական ժառանգութեան յետագայ դասդասման և գիտական մշակման ճանապարհին, մանաւանդ եթէ հաւատանք, որ կար արդէն ամբողջական ուրուագիծը, մնացել էին միայն վերջին վրձնախաղերը: Ճշմարտութիւնն այն է, որ այդպիսին դարձաւ Մ. Նշանեանի կազմածոն: 5 Այս առումով չմոռանանք, թէ ինչպէս է Մ. Նշանեան իր կազմած «Յակոբ Օշականի մատենագիտութիւն» գրքի «Յառաջաբան»ի սկզբում յատկապէս մատնանշում, որ իրեն հասել են «...Արտաշէս Տէր Խաչատուրեանի կողմէ մինչև 1983 տրամադրելի նիւթերուն կատարումով» մշակումները («Յակոբ Օշականի մատենագիտութիւն», էջ 11), որոնք ինքը կոչում է «ներկայ մատենագիտութեան առաջին տարբերակ» (Նոյն տեղում): Այսինքն՝ ընդգծում է, որ վերջին տարբերակները (1983-1993 թթ.) օշականեան մատենագիտական տուեալները Ա. Տէր Խաչատուրեանը չէր կարող հասցրած լինել աւարտի: Պատահական չէ վերջինիս անուղղակի խոստովանութիւնը, թէ՛ «...անթերի չէ մեր գործը», բայց և տեղնուտեղ արձանագրումը՝ «սակայն, իր այս վիճակին մէջ իսկ, կը կարծենք, որ կրնայ ուղեցոյցի դեր կատարել Յ. Օշականի կենսն ու գործը ուսումնասիրողներուն համար» (Նոյն տեղում, էջ 21):

գետեղում բարոյական պարտքի թելադրությամբ:

Ուշագրաւ է, որ սոյն գրքում, ըստ էութեան, քով քովի դրուած են երկու «Յառաջաբան»ներ, որոնցից առաջինը ստորագրել է Մ. Նշանեանը: Հանգամանալից ներկայացուած են հնի վրայ նորոգուած մատենագիտութեան ստեղծագործական պատմութեան մի քանի դրուագներ, որոնք էական լոյս են սփռում հրատարակման՝ լուսանցքից այն կողմ անցած-դարձածի վրայ: «Սկիզբը կը կարծէինք,- ազնիւ մտահոգութեամբ գրում է հեղինակը,- ստուգումներ կատարելու և եղածը կարգի բերելու հարց մըն էր միայն (այսինքն՝ այն, ինչը հաւանաբար Վ. Օշականի երկրորդ խնդրանքն էր, այս անգամ՝ Մ. Նշանեանին – Մ.Դ.)⁶, ու մատենագիտութիւնը շուտով պատրաստ պիտի ըլլար: Եւ սակայն մեզմէ հինգ տարի աշխատանք պահանջեց, բնական է՝ լայն ընդմիջումներով, վարանումներով և յուսահատութեան պահերով լեցուն»⁷: Եւ Մ. Նշանեանը ճիշդ էր իր անհանգստութիւններում:

Հնգամեայ այս միջոցը և, հետևաբար, ի հարկին կատարուած փոփոխութիւնները վերակազմուել են միայն իր աննահանջ տեսողությամբ, ասել է թէ՛ սկզբունքներով: Եւ եթէ եղել են «վարանումի ու յուսահատութեան լեցուն պահեր», «լայն ընդմիջումներ», նշանակում է՝ լցուած են եղել, նախ, ներքին երկուութեամբ, ինքն իր հետ մատենագէտի ունեցած երևութական անհաշտութեամբ: Ասել է թէ՛ միայն ակնարկում է Վ. Օշականի հետ նախնական պայմանաւորուածութեան և յետագայ, գուցէ և նոր ու կտրուկ վերաշարադրութեան վճիռների մասին: Եւ վերջապէս, ասել է թէ՛ եղած «անհաշտութիւնը» պիտի փնտռել իր և «արտաշիւսեան» հնարաւոր տարակարծութիւնների առկայութեան մէջ, որի նրբամիտ շրջանցումը Մ. Նշանեանի համար մնացել է յարգանքի նախադուռ հանգուցեալ գիտնականի նկատմամբ:

Փորձենք տեսնել, թէ որո՞նք էին տարակարծութիւնների բուն շարժառիթները: Մ. Նշանեանի տպաւորութեամբ՝ «Պատճառներէն մէկը անշուշտ այն է, որ 1983էն ասդին՝ շատ բան փոխուած է: Բազմաթիւ նոր ուսումնասիրութիւններ լոյս տեսած են Յակոբ Օշականի մասին, թէև մինչև այսօր մէկը տակաւին չէ ձեռնարկած գործին լման ընթերցումին: Մանաւանդ՝ մօտեցումներու որակը փոխուած է, Օշականի արտադրութիւնը

6 Պատահական չէր Վ. Օշականի համար Մ. Նշանեանին ընտրելու քայլը. նախ, նրանք գրչնկերներ էին, թէև իրենց միջև տարիքային զգալի տարբերութիւն կար, հաւասարաչափ գիտակցում էին Օշական երևոյթի իրական մեծութիւնը, բացառիկ տեղը գրականութեան մէջ, ասել է թէ՛ նրա ստեղծագործական աշխարհի արդիական ընկալման հաւատարմ ջատագովները և մեկնիչներն էին: Դեռ անցեալ դարի՝ արդէն հեռաւոր թուացող ութսունականների առաջին կէսին, աւելի ձգրիտ՝ արդէն 1983-ին, կարելի է ասել, նրանց հետաքրքրութիւնների կիզակէտն ամեհի Օշականն էր:

Բերենք միայն մէկ օրինակ. գրական ուսուցչապետին նուիրուած Մ. Նշանեանի «Վէպը և արդիական սկզբունքը» նշանաւոր ու ծրագրային յօդուածի («Բագին», ամսագիր գրականութեան և արուեստի, Պէլյուր, 1984, N 1-2, էջ 93-105) միայն սկզբնամատում գրականագէտը խօսքը համոզիչ դարձնելու հմայութեամբ երկիցս, իսկ մտքում՝ քանիցս, բաւարարում է «Օշական կը ստորագծէ» առարկութիւն չլեցնող կարգախօսի ներշնչանքով:

Արդարութեան համար չենք կարող երկու մտաւորական անհատականութիւնների կողքին չիշատակել նոյն այդ շրջանում գրականութեան մէջ Յ. Օշականի աննախադէպ դերակատարութիւնն արժևորած երրորդ արդիւնաւոր ընկերոջը՝ Վիպասան և գրականագէտ Գրիգոր Պըլտեանին: Աւելորդ չէ նշել, որ «Բագին»ի Յ. Օշականին նուիրուած բացառիկում տեղ էին գտել հենց Վ. Օշականի և Գր. Պըլտեանի բարձրակարգ երկու յօդուածները, համապատասխանաբար՝ «Յակոբ Օշականի տեղը արևմտահայ գրականութեան մէջ» (էջ 147-157) և «Յ. Օշական՝ քննադատ» (109-122):

7 «Յակոբ Օշականի մատենագիտութիւն», էջ 11:

դուրս բերելով յուշերու և անդրադարձներու նեղ ոլորտէն, զայն տեղաւորելով հետզհետէ աւելի՝ աշխարհի քննադատական հոսանքներու ծիրէն ներս և զայն ենթարկելով ստանձնուած տեսութիւններու փորձաքարին»⁸:

Մատենագիտական որոնումներում, ինչպէս արդէն ընդգծել ենք, Մ. Նշանեանն ընդունում է, որ Ա. Տէր Խաչատուրեանը վիթխարի աշխատանք է կատարել մամուլի մէջ տպուած ցանկերի ընդգրկման առումով և, ի պատիւ իրեն, յատկապէս տեղին է գործածում «**խկական յայտնագործութիւններ**» բնութագիրը, քանի որ նիւթերը, թէև «խառը համակարգումով», մշակուած են «**թերթ առ թերթ, հանդէս առ հանդէս, նկատի առնելով առաջին աշխատակցութեան թուականը**»⁹:

Դրանց կողքին նկատենք, որ Մ. Նշանեանի կատարած հիմնական փոփոխութիւնները, փաստացի տարակարծութիւնները վերաբերում են նաև մատենագիտութեան մէջ առանձին ենթագլուխ կազմած «**Օշականի մասին (յուշ, անդրադարձ, գրախօսական, ուսումնասիրութիւն)**» ընդարձակ լուսաբանումներով ենթագլխին¹⁰, որովհետև, ըստ մեկնաբանման, առաջին մատենագրողը հետևել է ժամանակագրութեան սկզբունքին, յաճախ էլ՝ «...պարզապէս նոր տուեալները աւելցնելով մէկը միւսին ետևը»¹¹: Հետևելով Ա. Տէր Խաչատուրեանի սևագիր նօթերին՝ Մ. Նշանեանը գալիս է նոր եզրայանգման. «**Իր նպատակն էր այդ բաժինը ներկայացնել հեղինակներու անուններուն հետևելով, բայց գործադրումին եղանակը այդ սկզբունքին չէր հետևեր բնաւ**»¹²:

Ահա թէ ինչու Յ. Օշականի մատենագիտական տուեալները Մ. Նշանեանը վերախմբագրել է և կամ նորովի շարադրել՝ հետևելով զուտ ժամանակագրական, ըստ էութեան՝ միագիծ «տեսողական» սկզբունքին: Մեզ համար Մ. Նշանեանը մնում է Յ. Օշականի խոշորագոյն գեղագէտ մեկնիչներից մէկը, առաջին հերթին «Համապատկեր...»ի Յ. Օշականը գիտակ ընթերցողին էապէս մօտեցրած, ճանաչելի մակարդակի հասցնելու քայլ արած տեսաբան: Խօսքի մէջ, ի հարկէ, կայ վերապահում, քանի որ մի կողմից Յ. Օշականի գիտական բարդ, ընկալման մէջ սուր լարում պահանջող բնագիրն է, ապա նրան յաջորդող արևմտահայ «օշականեան դպրոցի» որակապէս լուսագոյն հետևորդների, սաների՝ Վ. Օշականի, Գր. Պըլտեանի և այլոց՝ իրականում ոչ դիրքին, վերացարկումի քննական լոյսով բացուող «**գրականագիտական կանգնումը**», որն առ այսօր պահում ու պահպանում է բառիմաստ նշանների, խօսքի, Յ. Օշականի գտած բառով՝ ներքին «**դիմագծութեան**» իւրացման հեռաւորութիւն կամ բովանդակութեան դիմադրական առկայութիւն:

Մինչդեռ այդպիսին չէ գրողի հարցում Ա. Տէր Խաչատուրեանի մատենագիտական մօտեցումը, որը նիւթը շարադրելիս «խոջընդոտները» որսացել է դեռ անցեալ դարի վաթսուհայրերի վերջից ու գիտական տեսակէտից ներքին անբաւարարութիւնը պահպանել առ նուազն մինչև ինստուականներ, աւելին՝ մինչև իր մահը: Դա երևում է յատկապէս նրա խօսքի

8 Նոյն տեղում:

9 Նոյն տեղում:

10 Տե՛ս նոյն տեղում, էջ 99-177:

11 Նոյն տեղում, էջ 12:

12 Նոյն տեղում, էջ 13:

մուտքից, երբ ազնիւ կասկած է յայտնում, որ «...անթերի գործ մը հրամ-
ցուցած ըլլալու գոհունակութիւնը չենք կրնար ունենալ»¹³: Եւ բնականա-
բար, նա ճիշդ է, քանի որ նիւթի ընդգրկման շառաւիղը տարբեր ժամանակ-
ներում և «աշխարհի չորս ծագերուն» անպարագրելի է, յարածուն, գրեթէ
խորքով անկառավարելի: Նոյնը չէ՞ր Մ. Նշանեանի խօսքի պարագային:

Մեկնական ուղղութիւնը արդարացուած մէկ տրամաբանութիւն ունի.
որքան հոսում է ժամանակը, այնքան «նախկին» փերից դուրս է յորդում
նոր միտքը, գիտական նոր մօտեցումների ձևաւորումը բերում է նոր ժա-
մանակի տեսողութեան ուրուագիծը: Ահա թէ ինչու առաջիկայ տարիների
հեռանկարի խորքով մենք վերստին հաստատում ենք, որ մօտենում է Յ.
Օշականի նոր մատենագիտութեան կազմութեան շրջանը: Արագ է հոսում
ժամանակը՝ մօտեցնելով նորոգ մատենագիտութիւնների մուտքը, ի մտի
պահելով, համադրելով նախորդ աշխատանքների կատարման արդիւնաւոր
եղանակները, գիտականութիւնն ու փորձը:

Ինչ վերաբերում է Յ. Օշականի գիտատեսական, մատենագիտական և
հրատարակչական բուն հաւաքական գործունէութեան գնահատումին, ար-
ժևորենք շրջադարձային պատեհ առիթը, որը գրողի հարիւրամեակն էր,
1983-ը՝ շոնդակից, բայց կանոնակարգուած հրապարակումների ու հրատա-
րակումների, մշակութային բազմապիսի նախաձեռնութիւնների ոգևորիչ
շրջանը:

Ընդգծենք նաև Հայաստանի գրականագիտական մտքի աւելի ճանա-
չողական արժևորումների բարձր, թէև զուսպ հետաքրքրութիւնները: Մատե-
նագիտական եռուն ու բուն շրջապտոյտ էր խոստանում նման ուշադրու-
թեան երկրորդ նոր ալիքը՝ երկրորդ հարիւրամեակի անմիջապէս սկզբին:
Ընդհանուր խորքի վրայ նուիրեալներին յաջողուեց նշանող յաղթահարել
(Գրիգոր Յակոբեան, Կիմ Աղաբեկեան, Կարլէն Դանիէլեան և ուրիշներ):

Ակնբախ է գնահատութիւնների զարգացման տրամաբանութիւնը. ինչ-
քան առաջ է գնացել օշականագիտութիւնը, ինչքան արժէքների իւրացման
ճանապարհին թուլացել են արևմտահայ և արևելահայ գնահատութիւնների
տարուբերումները, երբեմն ծայրայեղութեան խորքերում ծուարած «զուգա-
կշիռ» ընկալման խզումները, նշանակում է, որ առ նուազն այդքան բարձ-
րացել է գրողին հոգեհարազատ փիլիսոփայական բարդ համակարգի թէ-
կուզ դանդաղ, բայց խորքային իւրացումի գործակիցը, յատկապէս Հայաս-
տանում:

19-րդ դարի հայ գրականութեանն առաւել բնորոշ ընկերային ասան-
դական խորքի համեմատութեամբ Յ. Օշականի «կենսաբանական ցիդի»
հոգեբանական տիպաբանութեան մոդէլն արդէն նուաճել է ինքնութեան
կենսատարածք, մի բան, որ լաւագոյնս հաստատել է գրողի ոճերի ինքնա-
տիպութիւնը: Ի դէպ, անցեալ դարի ութսունականների առաջին կէսից
նկատուել է սկզբունքային պահանջ՝ առաւել բժախնդրութիւն օշականեան
վիպային ներհակ ըմբռումների որակական արդիւնքների նկատմամբ, երբ
երևոյթը չէր յանգում գրողի շուրջ եղած անդրադարձների նկարագրական
շարադրանքին, ինչը յաճախ էր այն մօտեցում 20-ական թթ. ընկալումների
աստիճանին, մի բան, որ արևելահայ ճանաչումներում յարատևում է մինչև

13 Նոյն տեղում, էջ 19:

80-ական թթ., ասել է թե՛ գրողը դժուար, բայց, այնուհանդերձ, «հասցնում էր յաղթահարել» փիլիսոփայական մտքի ազգային բացայայտումի իր ճանապարհը:

Ընդ որում՝ միակողմանի է թույլ գրողի բարքագրության ընկալման բացարձակացման միտումը ընդունել որպես գրական նիւթի իւրացման հիմնարար ձև և դրանով փորձել բացատրել «**յուշերու և անդրադարձներու նեղ ոլորտէն դուրս բերելու**»¹⁴ տպաւորապաշտ քննադատութեան ջանքը, ինչպէս փորձում էին ներկայացնել Գուրգէն Մխիթարեանը, Մուշեղ Իշխանը և ուրիշներ: Յ. Օշականի երկերի դասդասման հանգոյցներում, իրաւացիօրէն հեռանալով այդ ըմբռնումի գերիշխանութիւնից, Մ. Նշանեանը շահագրգռօրէն որոնում է «**աշխարհի քննադատական հոսանքներու ծիրէն ներս**»¹⁵ արդար մօտեցման պայմանը՝ իբրև մեկնական անհրաժեշտ քայլերի երաշխիք:

Հենց այս առումով առանձնացնենք Յ. Օշականի ստեղծագործական խթաններից երկու մեկնակէտ, որոնց շուրջ միասնական գիտական վերաբերմունք չի մշակուել: Առաջինը միթոսի ընկալման կարգաւորման ծրագրային գերիշխող ձգտումն է, այն ուղղութիւնը, որ ուղեկցել է գրողին հէքեաթի ժանրի մշակումներից դէպի վիպական տիրոյթ՝ 20-ական թթ. սկզբից մինչև 40-ականների վերջը, մինչև մահ: Վերլուծական մանրագին տեսողութեան պարագային կարելի է փաստել, որ օշականեան միթոսը լայն ճամբայ է կտրել՝ քննութիւն բռնելով բուն ժանրի՝ խորհուրդ-հէքեաթի առաջին ծաւալումներից («Խորհուրդներու մեհեանը» ժողովածուն տպուեց պատմութեան ներքին առաջին գրքին գրեթէ համընթաց, Պոլսում, 1922-ին, թէև հէքեաթները գրուած էին հիմնականում 1919-1921 թթ.) մինչև կեանքի վերջին շրջանի վիպագրական երկու յայտնի փորձերը, որոնց տպագրութեան ճակատագրերը մատենագիտական թնձուկի խորհուրդ ունեն¹⁶: Կարելի է ամրագրել, որ ստեղծագործական ուղու աւարտին Յ. Օշականը վերադարձաւ ազգային միթոսի աշխարհի լուսաւոր «խորհուրդներու» առաջադրոյթներին և այն էլ՝ լայն կտաւի երկերում՝ հիմնաւորելով, որ ժողովրդական ակունքների ողբերգական շեշտադրութիւններում պարփակուած են ազգային մտքի իմացական պատկերային հարուստ համակարգեր, երջանկութեան համար անհատի խօլական մաքառումի ու հոգեկործան փլուզման փոխնիփոխ անդրադարձներ, այսինքն՝ մարդու բնութեան բնաբուխ ընդվզման ու ընկերութեան առջև պարտադրուած նրա խոնարհումի իրար լրացնող դրուագներ:

Յակոբ Օշականի վերջին հէքեաթայենք երկու վէպերի առթիւ որդի Օշականը «Կեանքին պէս» գրքի վերջում տուել է խմբագրական ուշագրաւ բացատրութիւններ, որոնցից առաջինը թույլ է փոքր-ինչ ենթակայական: Հայրը մտադիր էր չորրորդ անգամ ամբողջական մշակման ենթարկել ձեռագիրը, բայց վրայ հասաւ 1948-ի անողորմ Փետրուարը. «**Այս իմաստով վէպը անաւարտ է, որովհետև թէ՛ հեղինակը չէ կրցած զայն իր ամբողջութեան մէջ վերջնական ձևի հասցնել, և թէ՛ ընդհատուած է պատմու-**

14 Նոյն տեղում:

15 Նոյն տեղում:

16 Մենք սկստի ունենք արձակագրի մահից միայն հինգ տարի անց տպագրուած «Օսկի Օրան» «երկարաշունչ հէքեաթ» բնութագրուած երկը (տես «Ակօս», ամսագիր գրականութեան և արուեստի, Պէյրուք, 1953, N 4-12): Նախապէս այն սերտաձած էր գրողի «Կեանքին պէս» անաւարտ ու անտիպ վէպին, որը յետագայում, 1995-ին, Վահէ Օշականի նախաձեռնութեամբ ու բժախնդի խմբագրութեամբ լոյս տեսաւ Լոս Անճելըսում առանձին հատորով, բայց, բնական է, այլևս տարանջատ «Օսկի Օրան»ից:

թիւնը: Սակայն նոյն ատեն աւարտած է, որովհետև, ըստ Աշակերտի¹⁷ նշումին, Օշական ըսած է, թէ «...ուր որ մեռնիմ, հոն կը վերջանայ այս գործը»¹⁸:

Մեռաւ Յ. Օշականը, իսկ աշխատանքի սեղանին «Կեանքին պէս»-ի աւարտումը ձեռագիրն էր, գրքի ձեռագիրը: Բայց՝ առանց «Օսկի Օրան»-ի: Խմբագիր Վ. Օշականը յստակ կողմնորոշում է ընթերցողին. «Երրորդ անգամ գրուած ձեռագրին վերջին էջին վրայ կը գտնուի Է գլուխը, որը կը կրէ «Օսկի Օրանը» հէքեաթ վերնագիրը: Սակայն այդ բաժինը պէտք չէ նկատել ու փնտռել որպէս վէպին շարունակութիւնը կազմող հատուած: ...Հեղինակը գատած է վէպէն ու վերածած առանձին գործի»¹⁹: Այստեղ արդէն Վ. Օշականը ենթակայական մօտեցումի առիթ չի տալիս՝ կատարելապէս առանձին դիտելով «հէքեաթահիւս» երկերը՝ ձիշդ այնպէս, ինչպէս «Մնացորդաց»-ից «Մաթիկ Մելիքխանեան» վէպը:

Յ. Օշականի վիպաշարերի մատենագիտական վերարժևորման մէջ ժանրային տրոհումներից առաջացած վերակառուցումներն առանձին նշանակութիւն են ձեռք բերել՝ ուրուագծելով 30-40-ական թթ. նրա արձակի ողջ ուղղութիւնը՝ իբրև միասնական պատումի մէկ արտայայտութիւն, իբրև գեղարուեստական մտածողութեան միաձոյլ համակարգ: Ընդ որում՝ մատնանշելով ժանրային տրոհման նախասիրութեան մատենագիտական կողմը, առանձնացնելով «Մաթիկ Մելիքխանեան»-ի գրական նիւթի՝ մէկ հանգրուանի մէջ «նեղացումի» տենդենցը վիպաշարի հատորներից իբրև վիպական ինքնուրոյն միաւոր²⁰, ըստ էութեան՝ արձանագրում ենք Յ. Օշականի սևեռումը ազգային երկու «գուգակշիռների» համադրումի ջանքին: Դա իւրատեսակ վերադարձի խնդրանք-պահանջ է՝ ուղղուած արևելահայ ու արևմտահայ միասնական մշակութային ակունքի ճանաչմանը, որի դիմաց ունենք, սակայն, ըստ գրողի, երկուութեան շարունակուող բարդոյթը, անընդհատ հեռացումի, միմեանցից կաղապարուելու, կեղևուելու տառապանքի ու խեղճութեան ենթագիտակցութիւնը, որ այդպէս էլ իմացական գիտակից քայլի չի վերափոխուում: Հեղինակի՝ դեռ «Մեհեան»-ից եկող «Հայաստանեայց» հարցադրումների խօսափողն է Մաթիկ Մելիքխանեանը, որին իւրովի ներքաշել է մշակութային-հայեցողական կենսադաշտի իրեն յուզող ոլորտ. «**Եւ որովհետև մէկ հատիկ մարդ աշխարհ մը ազդմունք է և հակազդմունք, կը հասկցուի, թէ Մելիքխանեանի առիթով ես ըլլամ փորձուած այդ աշխարհը նուաճել ուժերուս ներածին չափով**»²¹: Վէպի նախաբանում ներկայացնելով իր և հերոսի սերտաճման գիտակից քայլը՝ հերոսի, աւելի

17 Վ. Օշականը վկայում է, որ պահպանուած է ձեռագիր արձանագրութիւն, որը կազմուել է «Կեանքին պէս» վէպի երրորդ մաքրագրումի աւարտին՝ «Աշակերտ» ստորագրութեամբ: Եւ հենց «Աշակերտ»-ն է արձանագրում վիպական փաստացի աւարտը՝ պայմանաւորելով այն նիւթի անբողջական մատուցման աւարտումութեամբ: Իսկ դա նշանակում է, մի անգամ էլ կրկնենք, թէ «Օսկի օրանը» մէկընդմիջտ տարանջատուած է իրեն ծնող «Կեանքին պէս» վէպից (Տեն **Օշական Յ. Յ.**, Կեանքին պէս, Լոս Անձելըս, «Ապրիլ» հրատ., 1995, էջ 283): «Աշակերտի» խորհրդին, իբրև Յ. Օշականի գրական վարքագծի ոչ պատահական դրսևորման, իւրովի անդրադառնում է նաև Թորոս Ազատեանը, որը 1925-ին վկայում է, թէ «Աքլորամարտ» երկի սևագրութիւնը գրողի աշակերտն է տրամադրել խմբագրութեանը: Հարցերն օդի մէջ էլ մնում են. ինչո՞ւ գրողը չի բերել, կամ՝ ինչո՞ւ «սևագրութիւնը» (տեն «**Ընդարձակ տարեցոյց**» **Ազգային Սուրբ Փրկիչ Հիւանդանոցի**, խմբագիր՝ Թ. Ազատեան, Պոլիս, Նոր շրջան, Ա. տարի, 1925, էջ 254):

18 Նոյն տեղում:

19 Նոյն տեղում:

20 Տեն «**Բագին**», Պէյրուօ, 1974, N 5, ինչպէս նաև բուն շարունակութիւնը՝ **Նոյնը**, 1975, N 1:

21 **Օշական Յ. Յ.**, Մաթիկ Մելիքխանեան, վէպ, Պէյրուօ, 2010, էջ 10:

ձիշղ՝ իր ուսերին նա դնում է գրականության մեջ վիպասանի խաղացած պարզունակ դերից վեր յանձնառություն, որը առաքելության, իր իսկ բառով՝ «յաւակնութեան» թիկնոց է: **«Ատոնցմէ են աշխարհներու ճարտարապետում մը (Պալգաք), հոգիներու առարկայացում մը (Տոսթոյևսկի), ընկերություններու բնական պատմություն (Ջոլա), կորսուած երկրամասերու վերագիտ մը (Մարսէլ Փրուստ): «Մնացորդաց»ի հեղինակը աւելի համեստ է ներկայ հատորին մէջ»²²**: Դա յուշում է ամենակարևորը՝ իր վրայ մտքի տիտանների յարատև ներկայությունը և ազդեցությունների թողած ակօսի ուղղակի սահմանները:

Վէպերի ու պատմուածքների, նաև՝ պարզում է «Աքլորամարտ»ի օրինակով թատերական երկերի բնագրերի անընդմէջ վերաձևումների նախահիմքը գլխաւոր նիւթի հանդէպ անբաւարարությունն էր, որ ապրում էր իր գրչի դիմաց խստապահանջ Յ. Օշականը: Դա էն ազգային յեղաբեկումների մարմնաւորման պահանջն է, էն գրական «նշանի ահագնությունը», էն արևմտահայոց հաւաքական ապրումների գրական քարտուղարի բեռան ծանրությունը: Վերջապէս դա ազգային գրականությունը հայեցի մէկ հունի մէջ տեսնելու, «զուգակշիռները» կեանքի կոչելու բուռն փափաքն էր՝ **«...աւելի տիրական հակումով դէպի արևմտեան ընդհանուր արուեստն ու հասկացողությունը: Ի վերջոյ սիրտը նոյնն է գրեթէ ինչպէս Հռենոսի ափունքին, ինչպէս Վոսփորի: Կը խորհիմ, թէ տարբերությունը երանգներու վրայ է և ոչ թէ հիմնականին:**

Երբ կը մտնենք արևելահայ գրականութենէն ներս, անշուշտ մենք զմեզ կը զգանք աւելի մօտ մեր ցեղին ընդհանուր իմաստին: Ինչ փոյթ Պոռշեանցի գործին ձախողանքը կամ նոյնիսկ Ղազարոս Աղայեանցի մը վարժապետական արուեստը, երբ անոնց ընթերցումը ինծի պատեհություն կու տայ քիչ մը աւելի խոր զգալու իմ պապերուս հոգին:

Զրի և թերևս թեթև ազգայնականություն մը այս պահանջքը՝ իմ կողմէ արուեստի գործի մը: Ահա թէ ինչու բոլոր իրականությունները, մեղքերը, տկարությունները, սոփեստությունները իմ մէջ կը վերածուին քաղցր գոհունակութեան մը, երբ կը կարդամ գործեր, որոնք զիս աւելի հայ կ'ընեն: Արևելահայ գրականությունը իր այս առաքիներությունները աւելի հարազատ կերպով կը ներկայացնէ ուրիշներու»²³:

Փոքր-ինչ երկարուկ այս մէջբերումով Յ. Օշականը բացայայտում է իր և Արևմուտքի գրամշակութային բուն աղերսների թելերը, որով հպարտանում է, և ուղիղ անցում կատարում ազգային միասնական հունի ընկալումներին՝ կանխագծելով գրական երկու հատուածների յետագայ զարգացման իր տեսլականը, որքան էլ գրական ու լեզուական միջավայրերի տարբերությունները, փառագոչ մրցակցությունը հեռու փորձէին պահել նրանց իրական շահագրգռությունները:

Օշականեան հրատարակչական խառնիճաղանձ պատմութեան մէջ հերթագայել են բազմաթիւ քաղաքներ, ինչը հանրահռչակուելու գուցէ միամիտ, բայց ազնիւ նախասիրություն էր դեռ վաղ շրջանից՝ Պոլիս, Մոսկուա, Կա-

22 Նոյն տեղում:

23 Օշական Յ. Յ., Ջուգակշիռ արևելահայ և արևմտահայ գրականութեանց, Պէյրութ, Համագգայինի «Վահէ Սէթեան» տպ., 1999, էջ 40:

հիրէ, Երուսաղէմ...: Աշխարհագրական միջօրէականները ծաւալուեցին նաև յետագայում:

Վերադառնալով «Մաթիկ Մելիքխանեան» վէպի տպագրութեան թնձուկին՝ նշենք Պէյրութի խաղացած դերի՝ այսօր էլ տարօրինակ վիճակներ առթող բացառիկութիւնը: Նախ, արձանագրենք, որ նրա ամսագրային («Բագին», 1974–1975) և առանձին գրքով (2010) հրատարակումների հասցէն նոյնն էր: Միայն թէ չգիտես, և ոչ մէկն էլ չի կարող դրան տրամաբանուած բացատրութիւն տալ, թէ ինչու է այսպէս ձգուել գրքի 36 տարուայ երկար ու ձիգ երկունքը նոյն Պէյրութում, երբ ընդամէնը 278 էջ պիտի կազմէր ամբողջ վէպը, իսկ ամսագրային տպագրութիւնը փաստացի նախահիմք էր: Նման անըմբռնելի գրական գլուխկոտրուկներ կարելի է դեռ քանիցս մատնացոյց անել բնագրական անցած փորձերում:

Նոր մատենագիտութեան կազմութեան անհրաժեշտութիւնը անցեալի ժառանգութիւնը ի մի բերելու առումով աւելի է սրում և զարմանք յարուցում «Նամականի» Ա վտիտ հատորի կիսակատար հրատարակութեամբ: Առաջին հատորում նամականիի հաւաքագրումը ամբողջացաւ միայն 1983-ին՝ հարիւրամեակի շրջանում: Խմբագիրը ամենահաս Պօղոս Մնասպեանն էր: Հրաշալի: Ընդամէնը՝ 126 էջ: Եւ ի՞նչ. նամականու հրատարակումից անցել է գրեթէ չորս տասնամեակ: Հրապարակի վրայ դեռ շատ ենք փնտռելու մի նոր Մնասպեան, որ մարի արդէն մեր սերնդի պարտքերը Յ. Օշականի վաստակի հանդէպ: Յատկապէս ուշադրութեան կենտրոն բերենք հարցումի գլխաւոր կողմը՝ երբ է գալու վերջապէս գրողի նամակների երկրորդ հատորը լոյս աշխարհի հանելու ժամանակը:

Կամ յիշատակենք մեզ ափ ի բերան թողնող ուրիշ թնձուկ՝ այս անգամ թատրերգութիւնների հետ կապուած. «Փանք Աստծոյ...» մէկ արարով խաղը՝ գրուած 1924–1926 թթ., տասնամեակներ ի վեր կորսուածների շարքին էր դասուած, բայց ահա ձեռագիր «հետքը», պարզուում է, կարելի է գտնել ... Երևանի Ե. Չարենցի անվան Գրականութեան և Արուեստի թանգարանում, Մարի Թէքէեանի նուիրատուութեան շնորհիւ²⁴: Արկածային անհաւատալի ճամբայ կտրած այս թատրերգութիւնը լոյս է տեսել առ նուազն վաթսուն տարի անց՝ 1984-ին Պէյրութի «Շիրակ»ի էջերում, Վաչէ Ղազարեանի անդուլ ջանքերով ու մեկնութեամբ:

Նշենք նաև, որ Մ. Նշանեանը յատկապէս թատրերգութիւնների մատնանշումներում ակամայ բախուել է դժուարութեալի գրապատմական հարցադրումների, բայց հասել է մեկնութեան առաւելագոյն արդիւնքի: Բերենք տիպական մէկ օրինակ. նա նորարար արժևորման նախադրեալ է դարձրել անհամեմատ վաղ, 1921-ի ամրանը, Ֆիլիպէտում գրուած մէկ գործողութեամբ «Աքլորամարտը» թատերակը, ինչպէս կարծում է Պ. Մնասպեանն իր կազմած մատենագիտական փորձում²⁵, թէև դրա ծննդոցի մանրամասներն առ այսօր մնում են կարծես մշուշոտ: Արձակագիր և քննադատ Գր. Պըլտեանը նիւթի

24 Մ. Նշանեանը այս առթիւ տալիս է ժխտ բացատրութիւն մէկ արարով խաղի մասին, որը լոյս տեսաւ Պէյրութի «Շիրակ» հանդէսում («Շիրակ», գրականութեան և արուեստներու ամսագիր, Պէյրութ, Յունիս, 1984, N 6, էջ 43–55): Նա գրում է, որ օրինակը նախապէս «...գտնուել է Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանը...: Թողթածրարին նշումներուն համաձայն՝ ձեռագիրը նուիրուել է Մարի Թէքէեանին կողմէ» («Ցակոբ Օշականի մատենագիտութիւն», էջ 81):

25 Տե՛ս «Բագին», 1984, Պէյրութ, N 1–2, էջ 14:

համադրման աշխատանքի արդիւնքում յիշատակում է գրութեան թուականների այլ տարբերակները²⁶:

Փաստօրէն երգիծախառն «Արլորամարտը» զանեշտի խորագրի տակ գրական շրջանառութեան են դրուել թատերական մէկը միւսից անկախ երեք տարբերակներ, որոնցից և ոչ մէկը, Վահէ Օշականի համոզումով, նախապէս չի ունեցել այդ անունը²⁷: Գրութեան ժամանակացոյցով երեքն էլ վերաբերում են 1920–1921 թթ., բայց տպագրութեան Յ. Օշականը առաջին անգամ այդ անուն տակ յանձնում է անհամեմատ ուշ, մեր կարծիքով, 1924–1925–ի շրջանում գրուած երկը՝ «Պոլսական բարքեր» ենթախորագրով²⁸: Այն լոյս է տեսնում գրութիւնից անմիջապէս յետոյ, 1925–ին, Պոլսի Ազգային Հիւանդանոցի «Ընդարձակ տարեցոյց»ի անդրանիկ համարում, Թորոս Ազատեանի անմիջական խմբագրութեամբ²⁹: Երգիծական տարրի, աւելին՝ պատկերի կառոյցը գերիշխում է աւելի շատ այստեղ: Այն պայմանականօրէն

26 Գր. Պլլտեանը մատնանշում է, որ յիշեալ երեք թատերախաղերը՝ «...«Նոր պակկը», «Կնքահայրը» և «Արլորամարտը» գրուած են նոյն տարիներուն, նոյնիսկ ամիսներուն: «Արլորամարտը» (բայց ի՞նչ – Ս.Գ.) կը կրէ 1 Մայիս 1920 թուականը, միւսները թուական չունին: Օշական սակայն ուրիշ տեղ կը թելադրէ, որ ատոնք «...1921ին պուլկարական լեռնագիւղի մը մէջ ութ օրուան ընթացքին մէկ շունչով կ'արժէ բռնէ, գրուեցան...»: Եթէ այս նշումները ստոյգ են, ապա կը գտնուինք Օշականի առաջին թատերական երկերուն առջև» (Պլլտեան Գր. Յ., Մարտ, Արլորամարտ, տպ. Կրկնիկոյ Կայտնականութեան, 1997, էջ 375): Գր. Պլլտեանի հայեացքում ուշագրաւ, խորքի մէջ ընդհանրացնող պարբերացում ենք տեսնում Յ. Օշականի ժանրային անցումների ճանապարհին. «Արլորամարտը» թատերական այս արտադրութիւնը կը կանխէ Օշականի վէպերը, գեղեցիկը ընդմէջ «Խոնարհները»ի կարճ նորավէպերուն և «Շահապագ»ին: Զուգահեռ է «Կայսերական յաղթերգութիւն» անաւարտ շարքին: Այլ խօսքով՝ թատերգութիւնները կու գան դէպի ընդարձակ վէպը ուստումէն առաջ և կը ծնին այն կարճ ժամանակաշրջանին, երբ աղէտէն ետք Պոլսոյ մտաւորականութիւնը կը փորձէ կազմակերպուիլ վերստին» (Նոյն տեղում): «Ընդարձակ վէպի ուսում» ասելով՝ գրագէտը նկատի ունի «Ճակ-Պոլսոյ» հոգեբանական խորքով սփիւռքահայ վէպը սկզբնաւորելու քայլը, որին անմիջապէս յաջորդեցին Շահան Շահնուրի և Զարեհ Որբունու ծրագրային վէպերը: Ընդգծենք, որ մի քանի ամսուայ տարբերութեամբ Վազգէն Շուշանեանի առաջին, նոյնքան առաջնակարգ վէպը կանխում է Յ. Օշականի դերին, պիտի նկատի ունենաւ, որ այդ շրջանով չեն սահմանափակուում ժանրային հետաքրքրութիւնները, որոնք, ի հանրէ, ոչ սկզբնական ոգևորիչ շնչով, ձգում են դէպի յաջորդ երկու տասնամեակ:

27 Հօր երեք թատերախաղերի՝ իր խմբագրած ստուար հատորում երրորդը «Արլորամարտ»ն է, որի ծանօթագրութիւններում անվերապահ կեցուածքով, խտովիչ յամառութեամբ յայտարարում է. «Այս թատերախաղին երեք ձեռագիրներէն և ոչ մէկը անուն կը կրէ, սակայն բաւական վատես ենք, որ անոնք «Արլորամարտը» կը կոչուին: ...Յստակ է, որ (հայրը – Ս.Գ.) կարևորութիւն կու տար որպէս աւագ երկ: ...Հոս կը ներկայացնենք երկուքը միայն: Երրորդը (ձեռագրերից – Ս.Գ.), որ ամէնէն կարճն էր ու գրուած կարմիր մելանով ու որոշ աճապարանքով՝ շատ հաւանաբար առաջին հեղումն էր հեղինակին մտքէն: Գիտենք նաև, որ Օշական յաջորդական խմբագրումներու կ'ենթարկէր իր գործերը և իւրաքանչիւր անգամ կ'ընդարձակէր և կը խորացնէր ձեռագիրը: Այս կը թուի ըլլալ պարագան նաև հոս» (Օշական Յ. Յ., Երեք թատերախաղեր, «Նոր պակկը», «Կնքահայրը», «Արլորամարտը», Համազգային մշակութային ընկերակցութիւն, Սան Ֆրանսիսքո, տպ. «Նոր կեանք», 1990, էջ 401):

Վ. Օշականը, մեր կարծիքով, վրիպում է, երբ «Արլորամարտ»ի երրորդ ձեռագիր–տարբերակը, որը չի տպագրել «Երեք թատերախաղեր»ում, աւելի ճիշդ, ձեռքի տակ չի էլ եղել, դիտում է իբրև հեղինակի մտքի «առաջին հեղում»՝ վերջին երկուսին աղերսուած: Իրականում այն խիստ տարբեր էր. նիւթը բացում էր «Ճակամարտ»ի ամօրեան խմբագիրների, գրողների կեանքից: Եւ «Ճակամարտ» օրաթերթի հոմանիշը այս զանեշտի համար դարձել է արդէն ոչ սկանայ, նպատակալաց խորագիր՝ «Արլորամարտը»: 28 Տե՛ս «Ընդարձակ տարեցոյց», Ազգային Սուրբ Փրկիչ Հիւանդանոցի, Պոլիս, 1925, էջ 254–296: Ընդ որում «Արլորամարտ»ի նոյն այս ենթախորագիրը կրկնում է նաև Վ. Օշականը՝ բայց արդէն 1990–ին: Իսկ Վ. Օշականի «չկարդացած» 1925–ի իրատարակութեան «Պոլսական բարքեր» ենթախորագրի կրկնութիւնը ինչ մնաց: Նկատենք, որ այս հարցն էլ մնում է ամօրեան:

29 Ուշագրաւ է, որ մինչ տպագրութիւնը տարեցոյցի խմբագիրը, կարդալով նիւթը, հասցնում է արտա–յայտել իր թունցիկ տարակոյսը և միաժամանակ հիմնաւոր հիացմունքը, որը գետեղում է հանդէպ մէջ, թատերակի առաջին իսկ էջի սկզբին՝ համարելով այն «սևագրութիւն», այսինքն՝ չմշակուած, «...գոր Պրն Յ. Օշական պիտի կատարելագործէր բեմին համար» (Նոյն տեղում, էջ 254): Թ. Ազատեանն այնուհանդերձ այն կարծիքին է, ապրում է «...այն ակնկալութեամբ, որ հեղինակը պիտի չուզէր այլևս գրադիւն անոր վերաբարտադրութեամբը (իմա՝ մշակուածով – Ս.Գ.)» (Նոյն տեղում), քանի որ այդպէս արդէն բարձր «շահեկանութիւն» ունի. «Անկախ յստակ ցոյցումն է շատ տխուր և արգահատելի մտայնութեան մը, որ փոխնիփոխ յաճախած է մեր գրողներէն մէկ քանիին» (Նոյն տեղում): «Արգահատելին» յաւերժական նիւթ է՝ գրական անախառնութիւնը: «Արգահատելին» մտաւորականութեան մշտաւն «աքլորամարտ»ն է:

կարելի է կոչել զաւելջտ, բայց՝ «թոյնը» մէջը:

Յետագայում միայն, 1990-ի ժողովածուում, «Աքլորամարտը» արժանանում է «երկրորդ» տպագրութեան, թէկուզ վերնագրի տակական հաւատարմութեամբ, բայց որդու կատարած էական, զգալի փոփոխութիւններով ու խմբագրութիւններով, երկու արարի և մէկ յաւելում-տարբերակի ընդգրկումով, ինչը, բացառուած չէ, կարող էր հեղինակի կենդանութեան օրօք յղացումի ենթակայական վերակառուցման ուշադրութիւնից դուրս լինել: Աւելին՝ այն այս մշակումով թուում է՝ Վ. Օշականի նախաձեռնութիւնն է, որպէս երկրորդ «Աքլորամարտ»ի շարք, անաւարտ խաղարկումի նոր փորձ, մի հանգամանք, «...գոր հեղինակը սկսեք էր մշակել, բայց մեզի անծանօթ պատճառներով չէ յաջողած աւարտել»³⁰, - ինչպէս, մեր կարծիքով՝ առանց հիմնաւորման, ենթադրում է հեղինակի որդին՝ հարցականների հսկայական դուռ ձգելով:

Ի դէպ, Մ. Նշանեանն այս առթիւ բերում է իր ծանրակշիռ անհամաձայնութիւնը, քանի որ չունի Վ. Օշականի մտադրոյթը փաստական հիմքով հաստատող նիւթեր, ուստի նրա եզրակացութիւնն աներկբայ է. «**Ունինք այսպէս յիրաւի՝ նոյն անունը կրող երկու թատրերգութիւններ, մէկը Թորոս Ազատեանին տպածը (որ հաստորի մէջ չէ մտած)** (այսինքն՝ «Երեք թատերախաղեր»ում բացակայում է, և սա Մ. Նշանեանի հիմնական կռուանն է Վ. Օշականին հակադրուելիս - Մ.Գ.), **միւսը՝ Վահէ Օշականի տպածը (իր քանի մը տարբերակներով): Երկուքը կապ չունին իրարու հետ: Հաւանաբար, Վ. Օշական ծանօթ չէր 1925ի «Աքլորամարտ»ին գոյութեան»³¹:**

Այստեղ, Մ. Նշանեանի և մեր կարծիքով, առկա է որդի Օշականի շփոթը, որը նոյն «Աքլորամարտը» խորագրի տակ, միայն ներքին համոզումի ենթակայական թելադրանքով, հաւաքել է երեք անուանում չունեցող թատերակներ: Ինչո՞ւ: Աւելորդ չէ անդրադառնալ յիշեալ երկի խորագրի բովանդակային իմաստին. մեր տպաւորութեամբ, «Աքլորամարտը» կարող է խորհրդանշել ոչ միայն քաղաքական առումով զոհի և դահձի ետնաբեմը՝ ցեղասպանութեանը յաջորդած առաջին տարիներին, այլև հեզնախառն մատուցմամբ՝ Անահիտի կերպարի շնորհիւ սիրոյ անմնացորդ զոհողութիւնը³²՝ նիւթապաշտ (մեծահարուստ վաճառական Սարաֆեան) ու բարեպաշտ (յեղափոխական Վահրամ) կողմերի հակամարտ ցուցադրութիւնների՝ արլորակների դիմաց, որը հեղինակի պատկերացումով «**պոլսական բարբերի**» շարունակական մատուցման եղանակն է:

Բայց կայ նաև «Աքլորամարտ»ի մշակութային եզրը: Թիրախը Պոլսի «Երեկոյ» օրաթերթի խմբագրատանը գրական ամենօրեայ սին զգվտոցն է խմբագիրների և գրողների միջև, տաղանդաւորութեան չափանիշների ընտրութեան խտրական անիմաստ «արլորամարտը»: Ուշադիր լինելու դէպքում խմբագրատան զգվտուքի տեսարանում կարելի է «ձանաչել» արևմտահայ գրական աղմկարար գործիչների և անցեալի եղերական յիշատակները պահող դէմքերի՝ նախաստիպերից շատերին՝ Երուանդ Օտեան (Երուանդ Իզնա-

30 Օշական Յ. Յ., Երեք թատերախաղեր..., էջ 647:

31 «Յակոբ Օշականի մատենագիտութիւն», էջ 61:

32 Ի դէպ, դրամայի՝ որդի Օշականի խմբագրած առաջին տարբերակում յատկանշական է հերոսուհու ինքնասպանութեան ընտրութիւնը, որից հեղինակը յետագայում հրաժարուել է:

տիոսեան), իրեն՝ Յակոբ Օշական (Յակոբ Յովհաննէսեան), Հրանդ Նազարեան (Լազարեան), Միսաք Մեծարենց (Տ. Ծատուրենց), Շաւարշ Միսաքեան, Արտաշէս Յարութիւնեան և ուրիշներ: Չմոռանանք, որ նոյն այդ շրջանում նրա սուր դրամատիկական սլաքների տակ էր ընկել Կոստան Զարեանը («Մինչև ճիւղ»), վէպի ժանրում՝ Սուրէն Պարթևեանը, իսկ նամականու մէջ անգամ՝ Դանիէլ Վարուժանը³³ և դեռ շատեր: Չմոռանանք, որ գրական անհանդուրժողութեան միջավայրի սուր դիտողունակութիւնը Յ. Օշականի անվիճելի առաւելութիւնն էր, ընդ որում՝ միշտ վեր միջանձնային յարաբերութիւնից կամ մտերմութեան աստիճանից:

Մեր տպաւորութեամբ՝ «Աքլորամարտը» իրարից տարբեր և ինքնուրոյն թեմաների մատուցմամբ թատերական շարք է ներկայացնում՝ տարբեր առաջադրութիւններով ու խաղարկումներով: Սա պատմութեան և հէքեաթների հետևողութեամբ՝ ժանրային նորարարութեան շարային իրատեսակ արտայայտութիւն է, այս անգամ՝ թատերագութեան ասպարէզում: Կապող հանգույցը, միտք բանին սա է՝ կեանքն ինքը անմիտ «աքլորամարտ է»՝ գրական, ազգային կամ ընկերային կնճիռների գորղեան անվերջանալի հանգույց, որը քակելը են գաւեշտ է, են ողբերգութիւն:

Ինչ վերաբերում է Յ. Օշականի թատերագութեան ընդհանրական հեռագնայ բնութագրումին, ապա կարող ենք դա հաստատել հենց իր դիտողունակ աչքով, քանի որ իրենից զատ ոչ մէկը թերևս նման սպառիչ գնահատական չէր կարող հնչեցնել: Ընդունելով հանդերձ, որ իր դրամաները խաղարկումից աւելի ընթերցման համար են՝ երկին բնորոշ ծաւալի և կերպարների հոգեբանական անսովոր լայնահուն բացուածքի առումով, վիպասան-թատերագիրը նրանց մասին իր բնութագրումը կատարում է սրատես դատումով, մի տեսակ ներքին հպարտութեամբ. «Աշխարհ մը ըսելիք կայ այդ թատրոնին վրայ: Յետոյ ձեզի կ'առաջարկեմ, որ անոնց ընթերցումը ընէք վէպերու վայել հոգեխառնութեամբ մը: Այն ձգողութիւնը, լարումը, խռովիչ տաքութիւնը, որոնցմէ ողողուած է Օշականի վէպը, նոյնութեամբ կը մնան ի զօրու անոր թատրոնին ալ վրայ: Այդ թատրոնը ոմանք թուական նկատեցին, ուրիշներ կործանեցին (իմա՝ դատաւիտեցին – Ս.Դ.): Օշական ինքը կը հաւատայ, որ իր թատրոնը հարազատ գաւակն է իր արեան»³⁴:

Այսպիսով, Յ. Օշականի պատմութեան, հէքեաթները, թատերագութիւնը, վէպերը, քննադատական յօդուածները և մենագրութիւնները բնագրերի համադրման բազմաձայլ աշխատանքների նորայայտ ծաւալների ակունք են դարձել՝ հնարաւորութիւն ստեղծելով էական շահագրգիռ դիսկուրս բացել ստեղծագործական և գեղագիտական ամբողջական հայեացքի վերակազմակերպման շուրջ:

Այս առումով յիշատակութեան արժանի է Սփիւռքի գրականութեան գիտակներից Վարդան Մատթէոսեանի մէկ նկատառումը՝ կապուած Մ. Նշանեանի կազմած մատենագիտական աշխատանքի հետ³⁵, որի հանդէպ, նկա-

33 Տեն Յ. Օշականի՝ Գեղամ Գավաֆեանին Ֆիլիպէից ուղղուած նամակը՝ 17 Յունիս, 1923: – «Լուսատուներ. սաները կը յիշեն», Փարիզ, Կեդրոնական Սանուց Միութեան հրատ., 1996, էջ 28:

34 Օշական Յ. Յ., Երեք թատերախաղեր..., էջ 69:

35 Ի՞ դէպ, Վ. Մատթէոսեանի «Մատենագիտութիւն Յակոբ Օշականի» գրախօսականը լոյս է տեսել կա- նադասայ «Հորիզոն»ի 1999 թուականի հոկտեմբերեան գրական յանդիւարում, հենց Մ. Նշանեանի մա-

տենք, բաւական զուսպ ոճ է որդեգրուած: **«Մատենագիտական աշխատանքները ...երբեք լիակատար չեն: Բայց հեղինակներուն աշխատանքը անոնց վատահելիութեան երաշխիքն է: «Յակոբ Օշականի մատենագիտութիւնը»** (իմա՝ Մ. Նշանեանի կազմածոն – Ս.Դ.) **իր ամբողջութեան մէջ վատահելի ու ապագային ընդլայնելի** (այսինքն՝ գրողը որքան կարդացուի, այնքան պիտի շատ ծաւալունն նրա շուրջ գիտագործնական քննարկումներն ու նոր յայտնութիւնները – Ս.Դ.) **ուղեցոյց մըն է, որուն բարիքները հետաքրքրասէրին համար պիտի աճին հիմա, երբ դար փոխած ենք, ու Օշականը կը կարդացուի՝ Ի. դարու բոլոր այսպէս կոչուած զարտուղի անունները** (ասել է թէ՛ Վ. Մատթէոսեանի համար Յ. Օշականը խորքով չճանաչուած արուեստագէտն է – Ս.Դ.) **մեր աչքի առջևէն տողանցած ըլլալէ ետք»**³⁶:

Մատենագիտական հատուածների մէջ, որպէս կանոն, պէտք է առանձնացնել ւարտունութեան դրոշմ ունեցող բաժիններ, որոնց մէջ ծրագրային առումով սպառիչ, «լմնցած» բնութագրումի սահմանները յստակ են, այլևս մէկընդմիշտ անփոփոխելի: Սրան է ձգտում ստոյգ մատենագիտութիւնը, և ոչ միայն Յ. Օշականի պարագային: Այն ենթադրում է ճշգրիտ մօտեցումներ և քայլեր: Համադրական շրջանառութեան մէջ դնելով ժամանակի մէջ, տասնամեակների ընթացքին աչքից վրիպած, կորսուած ձեռագիր և տպագիր, անհամեմատ ուշ բացայայտուած նոր նիւթեր, կատարելով փաստական նոր ու հին տուեալների դասդասման հետևողական քայլեր, թուականների և միջավայրերի շտկումներ, մամուլում ցրուած գեղարուեստական բնագրերի, յօդուած-գրախօսութիւնների գիտաքննական մշակումներ՝ օշականագիտութիւնը նախապատրաստական դուռ է բացում ակադեմիական հրատարակութիւնների համար: Իսկ մենք լաւ գիտենք, թէ ինչ կարևոր է ժամանակի մէջ ճիշդ կողմնորոշել մեկնական խօսքի ուղղութիւնը, ճիւղաւորումը, երբ աւելի է մեծանում ճիշդ պահին նետուած անգամ ռեպլիկի նշանակութիւնը: Իսկ փաստ է, թէ որքան շուտ է նկատուում գրամշակութային «արձանագրութիւնը», այնքան շահում է գրողի գիտական «ամբողջականութիւնը», մինչդեռ յապաղումները, ենթակայական, պատահական կանխագուշակումները կամ չհիմնաւորուած ենթադրութիւնները կարող են աղօտացնել, խճողել, անգամ վտանգել աղբիւրների իսկութիւնը:

Վ. Մատթէոսեանը կողմ է փաստի գրապատմական համակողմանի դիտարկումին. անգամ աննշան թուացող շտկումներին մօտենում է գիտական կարգապահ զգաստութեամբ և գնահատում եղած քայլերը: Նրա օշականեան «վերադարձների» մատենագիտական շտկումից հարկ ենք համարում արձանագրել ընդամենը մէկ օրինակ: Եթէ Մ. Նշանեանը տրտմում է, որ չունի ամերիկահայ «Հայաստանի կոչնակ»ի խմբագիր Յովհաննէս Աւագեանի՝ Յ. Օշականի կազմած «Հայ գրականութիւն» դասագրքի (Երուսաղէմ, 1942) մասին գրած յօդուածի տուեալները, տատամսում նրա տպագրութեան թուականի շուրջ՝ 1943 թէ՛ 1944, Վ. Մատթէոսեանն անմիջապէս հասնում է յուշարար օգնութեան՝ խնդրեմ, թող արձանագրի մեր մատենագէտը. օշա-

տենագիտութեան կազմումի հրատարակութեան տարին:

36 **Մատթէոսեան Վ.**, Գրական-բանասիրական ուսումնասիրութիւններ, Աթիլիաս, տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 2009, էջ 399:

կանագիտության մէկ փոքրիկ պտուտակն է՝ Յովհ. Աւագեան, «Հայ գրականութիւն» (յօդուածի խորագիրը դասագրքի նշումն է), և տպագրութեան «հասցէն»՝ «Նոր գիր», ամսաթերթ գրականութեան և արուեստի, Աշուն, 1943, էջ 142-150: Ի դէպ, օրինակները կարելի է տարածել նաև անգլերէն յղումների շուրջ՝ արժևորելով ի հարկին ճշգրիտ ու անակնկալ այն մատնանշումները, որոնք Վ. Մատթէոսեանի իմացութեան հետևանքն են:

Բնագրերի համահաւաքման ոլորաններում մատենագէտների առջև կանգնած են երկու «կողմեր», նախ, գրողը՝ ստեղծագործական մանրակրկիտ աւագանում, գիտական մատուցման պատշաճ կեռնաններով, և երկրորդ՝ «շուրջիները», գրական մեր խայտաբղէտ միջավայրը՝ գիտական ու յաճախ նաև ենթակայական գունակարով, նկարագրական, յուշագրական և առ հասարակ ճանաչողական համակողմանի քննութեան մէջ, երբ կառուցում են հայելանման բազմաշերտ տեսողական անկիւններ, երբ անընդհատ վճիտանում է գրողի ու մարդու, անհատի ու քաղաքացու նկարագիրը:

Բայց կայ նաև մօտեցման մէկ ուրիշ՝ երրորդ պատուհան՝ նորանոր սերունդների գնահատող ամենատես աչքը, որից ամէն անգամ ակնկալում ենք նոր մեկնական հայեացքի, նոր գուգահեռի դրսևորում:

Եւ այսպէս, մէկ անգամ ևս հաստատելով, որ դարավերջին հրապարակ նետուած մատենագիտական աշխատանքը ծաւալուն ու խորքային է մինչ այդ Յ. Օշականի շուրջ տպածոյ ցանկերի մէջ եղածներից, իսկ դա անսակարկ ճշմարտութիւն է, այնուհանդերձ, փորձենք Նշանեան-Տէր Խաչատուրեան մատենագիտութիւնից ի ցոյց դնել բացթողումների ու վրէպների՝ մեր նկատած միայն մի փոքրիկ շերտը՝ վերհանելու համար շտկումների շարունակականութեան կարևորութիւնը.

ա) Պոլսի «Ոստան» հանդէսի 1920 թուականի Յունուար 16-ի համարում (Գ տարի, թիւ 5-6 (11-12), էջ 198-202) լոյս ընծայած գրութեան «**Կաղանդի գիշերով**» խորագիրը սխալ է բերուած. պիտի լինի «**Կաղանդ գիշերով**» (տէն «**Յակոբ Օշականի մատենագիտութիւն**», էջ 25 և 49): Ակամայ սխալը իմաստային շփոթի է տանելու ընթերցողին, որտեղ առաջինը Ծննդեան օրուայ գիշերն է մատնանշում, մինչդեռ երկրորդում շեշտադրուած է ոճային տարընթերցման տարբերակը:

Խորագրի նոյնական ընթերցման ճանապարհով երևան ենք հանում սխալի երկրորդ երեսը. աւելորդ չենք համարում այս առթիւ այստեղ վերբերել Կահիրէի «Արև» օրաթերթի 1926 թուականի Դեկտեմբեր 31-ին տպուած Յ. Օշականի պատմուածքը՝ «**Կեանքի պատկերներ**» խորագրով, որը չգիտես ինչու Մարկ Նշանեանի մատենագիտութեան մէջ դարձել է «**Կենդանի պատկերներ**»³⁷: Ինչո՞ւ այս գուր քայլը, ինչ կենդանի պատկեր. չէ՞ որ որբուկ, հիւծախտի վերջին հանգրուանում գտնուող հարսնուկի մանին է Կաղանդ գիշերով, որն ըստ էութեան՝ աւելի «կեանքի պատկեր է»՝ ողբերգութեան խորհրդով:

Նկատենք որ «Կայսերական յաղթերգութիւն» ժողովածուի մէջ սոյն պատմուածքը դրուած է «Կաղանդի գիշեր» ենթախորագրով³⁸, մինչդեռ բուն խորագիրը, որը գրքի խմբագիր Պ. Մնասկեանը զարմանալիօրէն շրջանցել է, շարքի արժէք ունի՝ «Կեանքի պատկերներ»³⁹: Աւելին, նոյն խմբագիրը,

37 Տէն «Յակոբ Օշականի մատենագիտութիւն», էջ 58:

38 Տէն Օշական Յ. Յ., Կայսերական յաղթերգութիւն, Պէյրութ, տպ. «Ալթափրէս», 1983, էջ 159-162:

39 Տէն «Արև», օրաթերթը ազգային, գրական, քաղաքական, Գահիրէ, 1926, ԺԳ տարի, N 2395, 31 Դեկտ.:

առանց հիմնաւորման, «բազմաչարչար» այս պատմութեան յատկերի ժանրին սահմանակցող գործը դրել է «Կայսերական յաղթերգութիւն» ժողովածուի «Երբ պզտիկ են» ենթաշարքում: Նաև հիմքեր չենք տեսնում «Արև» եգիպտահայ օրաթերթի մէջ տպագրուած գործում Յ. Օշականի դրած խորագիրը կամայականօրէն վերափոխելու Պօղոս Մնայեանի վճիռը: Չանտեսենք մանաւանդ, որ «Կեանքի պատկերներ» խորհուրդը մնում է հեռու Յ. Օշականի կազմած «Երբ պզտիկ են» շարքի բովանդակային տրամաբանութիւնից: Հետաքրքիր է, որ Մ. Նշանեանը մի քայլ առաջ է Պ. Մնայեանից և խորագիրը մասնակի վերականգնելու արդար փորձ է արել՝ վերցնելով «կենդանի» բառը, պահելով «պատկերները»:

բ) «Ոստան» հանդէսի՝ մեր յիշատակած նոյն համարի առումով մատենագէտը վկայակոչում է, որ հենց այստեղ է առաջին անգամ **Յակոբ Քիւֆէճեանը** ստորագրել «**Յակոբ Օշական**», ինչը հասցրել է փաստական տարածում գտած սխալի: Բանն այն է, որ «Յակոբ Օշական» գրչանունով նա հանդէս է եկել դեռ նախորդ տարին՝ Պոլսի «**Ճակատամարտ**» օրաթերթում՝ փակագծի մէջ յաւելելով նաև «Յ. Քիւֆէճեան» ստորագրութիւնը: Սա է «**Օշական**» գրչանունի առաջին կիրառութիւնը, իսկ յօդուած-յուշի խորագիրն է՝ «Արտաշէս Յարութիւնեան», փակագծում՝ «նիշեր»⁴⁰:

Ի դէպ, նոյն «Արտաշէս Յարութիւնեան» գրութեան առիթով, առանց խորամուխ լինելու գրական փաստի իսկութեանը, Մ. Նշանեանը կասկածում է Փարիզի «Կեանք և արուեստ» տարեգրքի խմբագրութեան տեղեկատուութեան⁴¹ վրայ՝ փորձելով հաստատել իր թիւր տպաւորութիւնը, թէ իբր գրութիւնը արտատպուած է Պոլսոյ «Ազատամարտ»ից, և ինքն էլ դառնում է իր սխալի պատանդը, երբ, առանց կասկածի նշոյլի, յայտարարում է, թէ «**մեր մատենագրութեան մէջ չկայ այդպիսի յօդուած մը**»⁴²: Արդե՞օք: Այստեղ Մ. Նշանեանի շփոթը վերաբերում է թերթերի անուանմանը. եթէ բացէր փարիզեան տարեգրքի սկզբնաղբիւրը և ճիշդ ընթերցէր խմբագիրների ուղեկից մեկնութիւնը, «Ազատամարտ»ի փոխարէն կը տեսնէր «Ճակատամարտ», ինչպէս վկայում է «Կեանք և արուեստ» տարեգիրքը:

գ) «Ոստան» հանդէսի 1920-ի թիւ 11-13-ում (էջ 558-560) լոյս է տեսել Յ. Օշականի «Անհետացող դէմքեր – Գ. Զօհրապ» գրութիւնը: Նիւթի տակ պարզաբանում չկայ, և տպաւորութիւն է ստեղծում, որ նշուած գրախօսութիւնը վերաբերում է Գր. Զօհրապին, մինչդեռ Յ. Օշականը գրախօսել է Արշակ Ալպոյաճեանի գիրքը Գր. Զօհրապի մասին⁴³:

դ) Մատենագիտութեան մէջ Մ. Նշանեանն առանձին տեղ է յատկացրել Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի մէջ Յ. Օշականի զետեղած գրութիւններին, որոնք փորձագրութիւններ են, շարքեր, ընդ որում՝ գլխաւորապէս լոյս տեսած Կիրակի օրերին: Նշում են միայն 1920-1921 թթ. համարներում լոյս տեսածները, մինչդեռ Յ. Օշականը տասնեակն անցնող գրութիւններունի օրաթերթում թէ՛ նախորդող 1919-ին, ինչը վկայում է նաև մեր՝ վերը նշած «Արտաշէս Յարութիւնեան (նիշեր)» յօդուածը, թէ՛ առաւելապէս յետոյ՝

40 Տե՛ս «Ճակատամարտ», օրաթերթ, Պոլիս, 1919, Նոր շրջան, Թ տարի, N 181 (2002), 15 Յունիս:

41 Տե՛ս «Կեանք և արուեստ», տարեգիրք, 1931, Փարիզ, Ա տարի, էջ 13:

42 «Յակոբ Օշականի մատենագիտութիւն», էջ 68-69:

43 Տե՛ս Ալպոյաճեան Ա. Ա., Գրիգոր Զօհրապ (իր կեանքը և գործը), Պոլիս, տպ. «Վ. և Հ. Տէր-Ներսէսեան», 1919:

1922-1923 թթ.:

ե) Մ. Նշանեանը «Ճակատամարտ» օրաթերթից «Ճակատին համար» ընդհանուր խորագրի տակ զետեղել է Յ. Օշականի «Ան որ կը մեկնի» փորձագրութեան տուեալը⁴⁴: Նիւթը ընդգրկում է ճակատ մեկնող հայրենասէրի անհողդողդ վճռականութիւնը, արտայայտում գրողի հիացումը, հաւատը վաղուայ յաղթանակի հանդէպ: Բայց վերնագիրը աններելիօրէն աղճատուած է, դարձել է անգամ հակընթաց իր իմաստով՝ «Ան որ կը մեռնի»:

«Ճակատին համար» խորագիրը ցոյց է տալիս հայրենասիրական շարքի ձևաորման նկատմամբ Յ. Օշականի ստեղծագործական խանդաղատանքը, որը, սակայն, զարգացում չապրեց, ինչպէս Առաջին Հանրապետութիւնը, որը խեղդուեց խանձարուրի մէջ: «Ճակատին համար» մեկնողները խոնարհուեցին, նահատակուեցին, վիրաւորուեցին: Կորցրինք հայրենիքի անկախութիւնը:

զ) Յ. Օշականին Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում աշակերտած Պ. Մնայեանը, թէպէտ առանց ստորագրութեան, յիսնականների երկրորդ կէսին իր կազմած «Միջնաբերդ» գրական տարեգրքում բերում է շահեկան վկայութիւն Յ. Օշականի բանաստեղծական փորձի մասին՝ համապատասխան նորայայտ, ըստ էութեան՝ անտիպ բնագրերով («Տապա-նագիր մը» և «Տապանաքարի մը վրան») և սրտագրաւ յուշ-պատառիկով⁴⁵: Յատկանշական է Պէյրութի տարեգրքում գլխաւոր խմբագիր Պ. Մնայեանի բացառիկ հոգածութիւնը ուսուցիչ Յ. Օշականի յիշատակին. լրանում էր գրողի մահուան տասնամեակը: Նկատենք, որ օշականեան նիւթերը բաւական ծաւալուն են՝ համալրումներով, մէջբերումներով, գրական բնագրային օրինակներով՝ կազմելով տարեգրքի հինգ բաժիններից առաջինը:

Պարզապէս զարմանալի է, որ Մարկ Նշանեանը իր կազմած մատենագիտութեան մէջ շրջանցում է գրական նշանակալից այս փաստը՝ ընդհանրապէս լռելով Պ. Մնայեանի «Միջնաբերդ»ում Յ. Օշականի հիմնաւոր «ներկայութեան» մասին, երբ հանդէսի ընծայականում նրա՝ «հարիւրներու հասնող աշակերտները» խոստովանել էին, թէ մտայղացել էին նուիրել «Միջնաբերդ»ի «...**առաջին երկու պրակները** (այստեղ պէտք է հասկանալ՝ մամուլները, որոնք ամբողջութեամբ կազմել են տարեգրքում առաջին 38 էջերը - Ս.Գ.) **Վարպետին** (իմա՝ Յ. Օշականին - Ս.Գ.)՝ **ընծայուած երախտագիտական սրտաբուխ տուրք մը իբրև**»⁴⁶:

Ընդհանրացնենք, ո՞րն է բանասիրական այս նկատառումների բուն նպատակը. ցոյց տալ, որ վրէպները կարող են լինել ոչ միայն կոյր պատահականութեան ծնունդ, այլ մեր կարծիքով, արդիւնք են աւելի խորքային հետեանքի, այն բանի, որ կազմողը, ստացում է, ականայ յաճախ է շրջանցում եղած սկզբնաղբիւրների մանրակրկիտ ստուգութեան նախապայմանը, յաճախ էլ ձեռքի տակ չեղած աղբիւրների պատճառով պարզապէս հնարա-

44 Համեմատութեան համար տեն սկզբնաղբիւրը՝ «Ճակատամարտ» օրաթերթ, 10-րդ տարի, Կիրակի, 24 Հոկտեմբեր, 1920, Նոր շրջան, N 588 (2409), շարունակաբար՝ 31 Հոկտեմբեր, 1920, Նոր շրջան, N 593 (2414), 7 Նոյեմբեր, 1920, Նոր շրջան, N 600 (2421) և «Յակոբ Օշականի մատենագիտութիւն», էջ 53: Պոլսի օրաթերթն արձագանգում է Առաջին Հանրապետութեան անկումի նախօրէին գրողի խփած յամատ անհազանգին, ցոյց տալիս այն խօյական հաւատը, թէ ճակատ մեկնող «զեղի տղան» ի վիճակի կը լինի Հայաստան փրկել: Այստեղից՝ խորագրի արդարացումը՝ «Ան որ կը մեկնի», այսինքն՝ պիտի գնայ կոտի դաշտ: Պիտի կոտի, ոչ թէ «մեռնի», ինչպէս կարծել է Մ. Նշանեանը:

45 Տեն «Միջնաբերդ», գրական տարեգիրք, Ա տարի, 1957, Պէյրութ, էջ 26:

46 Տեն «Աշակերտներէն՝ Վարպետին», նոյն տեղում, էջ 6:

տրութին չի ունենում իր այդ յանձնառութիւնը կատարել: Դա ըստ էութեան՝ նիւթերի սակաւութեամբ է պայմանաւորուած և բացատրելի: Աշխարհով մէկ են սփռուած աղբիւրները, սակայն այժմ է միայն հնարաւոր դառնում նրանց ամբողջական համահաւաքման նպատակադրումը:

Շահողը Օշականն է: Նա քայլ առ քայլ դառնում է «ամբողջական»:

Եւ եկէք արդար լինենք. նկատուած վրէպները մէկ կամ մի քանի մատենագէտների թոյլ կամ անբարեխիղճ աշխատանքի արգասիք չեն: Նրանք, ակնյայտ է, իսկապէս ջանացել են: Մեր նկատածը ոչ այնքան սպրդումներն են, որոնց «ներկայութեանը» վարժուած է կարծես ընթերցողը, որքան բանասիրական ճշդումների խորը գիտակցութիւնը, գրական փնտռողի անգամ աննշան թուացող մանրամասների վերհանումը, ինչը իրաւունք է տալիս դուրս բերելու մոռացութեան վտանգից գրապատմական փաստի անաղարտութիւնը: Միայն մէկ-երկու օրինակը կարող է ընդհանուր գաղափար տալ աշխատանքի մատենագիտական ծաւալի ու բանասիրական խորքային ծաւալումների մասին:

Այսպիսով, օշականեան մատենագիտութեան վրէպների բանասիրական քննական յետազօծը մեզ տանում է գիտամեթոդական երկխօսութեան նոր մակարդակի:

Սուրէն Գ. Գանիէլեան – հեղինակ է ինը մենագրութեան և հարիւրաւոր յօդուած-ուսումնասիրութիւնների: Կազմել և խմբագրել է Սփիւռքի գրականութեանը վերաբերող տասնեակ գրքեր: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակն ընդգրկում է արևմտահայ դասական և սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը, տեսաբանական հարցադրումները, արևմտահայ գրամշակութային խնդիրները, արևմտահայ կրթական ոլորտը:

Էլ. huugէ՝ spyurksd1948@spyurk-center.am.

Summary

ALL THE WAY TO THE “COMPLETE OSHAKAN”

Bibliography as straight line

Suren D. Danielyan

Key words – bibliography, Hakob Oshakan, Vahe Oshakan, Marc Nichanian, Artashes Der-Khachadourian, bibliographical data, criticism, press, narrative, tale, novel, criticism, mainstream of European mind.

The comprising of the Western Armenian great writer Oshakan’s bibliography had a long and hard way, that began since 1946s of the last century, when the writer was alive and interested in estimating his works. Our attention is focused on his collection “Qaghhanq” (“Chosen works”) (1946). After many years of bibliographical work Oshakan got a chance to overpass his literature and memorandum from merely personal circle to all European critical principals of

his time. Since 30s Oshakan got acknowledged as a theorist and promoted Armenian literature all the way up to the level of world literature.

From this perspective Artashes Der-Khachadourian's and Marc Nichanian's bibliographical work (1999) is prominent and retains our attention as their analysis can be evaluated as remarkable literary piece in the bibliography of Armenian Literature.

In this article we have tried to show the main tendencies of the writer's perception that brought to an ultimate conclusion: we are on the verge of a necessity for the compilation of new bibliography.

Резюме

К «ЦЕЛОСТНОМУ» ОШАКАНУ

Библиография как прямой путь

Сурен Д. Даниелян

Ключевые слова – библиография, Акоп Ошакан, Ваге Ошакан, Марк Ншанян, Арташес Тер-Хачатурян, библиографические данные, пресса, роман, критика, рассказ, сказка, русло европейского мышления.

Составление библиографии крупнейшего писателя армянского зарубежья Акопа Ошакана имело долгий и трудный путь, начавшийся с середины 40-ых годов прошлого века. Тогда автор еще был жив и проявил заинтересованность к подытоживанию своего творческого наследия. Наше внимание сосредоточено на сборнике «Выборка» (1946). Долгие библиографические изыскания выявили новые грани восприятия основных постулатов Акопа Ошакана, вычертили выход из мемуарных, сугубо личных тем к общеевропейским критическим принципам его времени. С 30-ых годов А. Ошакан стал крупнейшим теоретиком и историком новейшей армянской литературы, проложив новое русло для традиционного армянского мышления, подняв его на уровень всемирных литературных требований.

Знаменательным событием стал вышедший в свет в 1999 году емкий библиографический труд Арташеса Тер-Хачатуряна и Марка Ншаняна, посвященный богатому наследию Акопа Ошакана.

В статье выявлены основные тенденции нового восприятия писателя, подводящие к однозначному выводу: мы на пороге необходимости подготовки новой научной библиографии.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2019 թվականի հունիսի 2 (66), ամսագիր-հանդես, 2019

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

REFERENCES

1. **Akos**”, amsagir grakanut’ean yev’ aruesti, Beyrut, 1953, t’iv 4-12 (**In Armenian**).
2. **Alboyajian A. A.**, Krikor Zohrab (ir gyankə yev’ gorc’ə), Constantinople, “V. yev’ H. Ter-Nersessian”, 1919 (**In Armenian**).
3. “**Arev**”, orat’ert’ azgayin, grakan, qagh’aqakan, Cairo, 1926, Zh’G tari, t’iv 2395, 31 Dec. (**In Armenian**).
4. **Beledian Kr. H.**, Mart, Antelias, tp. Cilicio Kat’ogh’ikosut’yan, 1997 (**In Armenian**).
5. «**C**”**akata mart**”, orat’ert’, Constantinople, 1919, Nor sh’rjan, T’ tari, t’iv 181 (2002), 15 June (**In Armenian**).
6. “**Gyank yev’ arvest**”, taregirq, 1931, Paris, A tari (**In Armenian**).
7. “**Yakob Osh’akani matenagitut’un**”, kazmec Mark Nchanean, Artash’es Ter Xach’atureani kogh’me patrastuac’ naxagic’i himan vray, Los Anc”eles, 1999 (**In Armenian**).
8. “**Lusatunerə sanerə kə hish’en**”, Paris, Kedronagan Sanuc Miutyan hrat., 1996 (**In Armenian**).
9. **Matiossian V.**, Grakan-banasirakan usumnasirut’yunner, Antelias, tp. Cilicio Kat’ogh’ikosut’yan, 2009 (**In Armenian**).
10. “**Mijnaberd**”, grakan taregirq, A tari, Beyrut, 1957 (**In Armenian**).
11. “**Nor gir**”, amsat’ert’ grakanut’ean yev’ aruesti, New Ye’ork, 1946, Ə tari, t’iv 3-4 (**In Armenian**).
12. **Osh’agan H. H.**, Kayserakan hagh’t’ergut’yun, Beirut, “Altapress”, 1983 (**In Armenian**).
13. **Osh’akan Y. Y.**, Keanqin pes, Los Anc”eles, “Abril”, 1995 (**In Armenian**).
14. **Osh’akan Y. Y.**, Mat’ik Meliqxanyan, vep, Beyrut, 2010 (**In Armenian**).
15. **Osh’akan Y. Y.**, Qagh’hanq, hratarakut’yun yobelianakan yandz’nazh’ogh’ovo, Ye’rusalem, “Srboc Yakobyans”, 1946 (**In Armenian**).
16. **Osh’akan Y. Y.**, Yereq t’ateraxagh’er, San Francisco, “Nor Gyank”, 1990 (**In Armenian**).
17. **Osh’akan Y. Y.**, Zugaksh’ir’ arev’elahay yev’ arev’mtahay grakanut’eanc, Beyrut, “Vahe Setian” tp., 1999 (**In Armenian**).
18. “**Pakine**”, amsagir grakanut’yan yev’ arvesti, Beyrut, 1974, t’iv 5, 1975, t’iv 1, 1984, t’iv 1-2 (**In Armenian**).
19. “**Əndardz’ak tarecuyc Azgayin Surb P’rkich’ Hivandanoci**”, Polis, Nor sh’rjan, A tari, 1925 (**In Armenian**).